

(Կ. Oshk) գեղակերտ շինութիւնք ոչ թէ
բուն զիւղին մէջ են, այլ անոր ձորին վեր-
նակողմը, յՈւշի-Վան⁺ (այսպէս կը կոչեն
նաեւ տեղացիք, Կ. ըկ „Vank“): Գեղա-
շէն եկեղեցին թէեւ կանգուն՝ արդէն փա-
սուած է, նոյնպէս միւս գեղեցիկ շինու-
թիւնք, ի մասնաւորի շիրիմ-մատուռներու
շարք մը, որոնք իբր բնակարան եղած են
այսօր: Ուշի (ոչ թէ „Ողկ“¹) նոր ձեւ մըն
է. այս անուանս հնագոյն ձեւը կը յիշուի
պատմութեան մէջ՝ Աշունք²: Ամենագեղե-
ցիկն է Խախուսայ եկեղեցին՝ երբեմն նշա-
նաւոր ուխտատեղի, Վխիկ (Կ. Vychyk)
հովտին կողմնակի ձորոյն սկիզբը: — Գե-
ղեցիկ է նաեւ եկեղեցին յԱԷրեկ (Կ.
„Ekrek“). Թողլով յիշել ուրիշ նուազ
կարեւորները: Եթէ փաստի պէտք ըլլար՝
ասոնք առանձինն կը բաւէին ցուցնելու
թէ ինչ շէն քրիստոնեայ աշխարհ մըն էր:
Կ'երեւայ թէ յԱգրակ 1455ի գրուած

Baukunst der Armenier und Europa, Bd. I—II,
Wien 1918, p. 108 ff., 486 ff., 682 ff.

¹ Յակոբ կարնեցւոյ հրատարակութեան մէջ սխալ
տպուած է „Ողկ“ ասկէ Macler (p. 24) շփոթելով
կարծած է թէ նոյն ըլլայ „Ուշի“ բերդին հետ:
Իսոյց Ողական Արածանւոյ վրայ է ի Տարօն:

² Վարդան պատմ. տպ. Վենետ. 1862, էջ 85: